

Դ Ի Մ ՈՒ Մ

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 231-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

1. Դիմումը ներկայացնելու իրավական հիմքը.

Դիմումը ներկայացվում է՝ հիմք ընդունելով 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, 68-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը:

2. Դիմումի առարկան.

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝

կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 231-րդ կետի 2-րդ պարբերության 2-րդ նախադասության՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի, 78-րդ և 81-րդ հոդվածների համապատասխանությունն այնքանով, որքանով կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու դեպքում նա մեխանիկորեն զրկվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև հաղորդակցության ազատության իրավունքից:

3. Դիմումով վիճարկվող իրավական դրույթները.

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքն¹ ընդունվել է 2002 թվականի փետրվարի 6-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի մարտի 7-ին:

Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումների բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 36. Պատժախցում կալանավորված անձանց պահելու առանձնահատկությունները

(...)

Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց արգելվում են նամակագրությունը, տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների, լրացուցիչ սննդամթերք, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ, հանձնուքներ ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու ստանալը, հեռուստադիտումները, սեղանի խաղերից օգտվելը:

(...):»:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը² ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 24-ին, ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 10-ին:

¹ Այսուհետ՝ Օրենք:
² Այսուհետ՝ Օրենսգիրք:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 59. Դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցները

(...)

2. Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին **արգելվում են** դրամական փոխանցումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը և աշխատելը:

(...):»:

«Հոդված 98. Դատապարտյալին պատժախցում պահելու պայմանները

1. Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուժեր ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:

(...):»:

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշումն³ ընդունվել է 2006 թվականի օգոստոսի 3-ին, ուժի մեջ է մտել 2006 թվականի դեկտեմբերի 2-ին:

Որոշման հավելվածի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասության իրավակարգավորումների բովանդակությունը հետևյալն է.

«231. (...) Պատժախցում գտնվելու ժամանակահատվածում կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է նամակագրությունը, տեսակցությունները (բացառությամբ փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների), հեռախոսագրույցները, լրացուցիչ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության և այլ առարկաների ձեռք բերումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության

³ Այսուհետ՝ Որոշում:

օրենսդրությամբ սահմանված դեպքերի, հանձնուքների և ծանրոցների ստացումը, սեղանի խաղերից, թերթերից, գրքերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելը:

(...):»:

4. ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները.

«Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

«Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

«Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:»:

«Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:»:

5. Դրույթների կիրառելիության խնդիրները.

ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների համար ներքին կանոնները խախտելու կամ պարտականությունները չկատարելու համար նախատեսվում են տույժի միջոցներ: Մասնավորապես, Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ *ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները՝ նկատողության հայտարարում և պատժախուց տեղափոխելը մինչև տասն օր, իսկ անչափահասներին՝ մինչև հինգ օր ժամկետով:*

Հատկանշական է, որ Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումների համաձայն՝ *պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց արգելվում են նամակագրությունը, տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների, լրացուցիչ սննդամթերք, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ, հանձնուքներ ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու ստանալը, հեռուստադիտումները, սեղանի խաղերից օգտվելը:*

Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նույնպես նախատեսվում է, որ տույժի միջոցները կիրառվում են կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ:

Անդրադառնալով դատապարտյալների տույժի միջոցներին, անհրաժեշտ է նշել, որ միննույն տույժի միջոցները օրենքով նախատեսված դեպքերում կարող են կիրառվել նաև նրանց նկատմամբ: Մասնավորապես, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ *ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար դատապարտյալի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները՝ նկատողություն և տեղափոխում պատժախուց՝ մինչև տասն օր ժամկետով:*

Համանման սահմանափակումներ նախատեսվում են նաև պատժախուց տեղափոխված դատապարտյալների համար: Այսպես, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են դրամական փոխանցումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը և աշխատելը:* Ավելին, Օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով նույնպես սահմանվում է, որ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու դեպքում նախատեսվում են դատապարտյալի առանձին իրավունքների զրկումներ: Մասնավորապես, *պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուրքեր ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:*

Հարկ է ընդգծել նաև, որ Օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ *տույժի բոլոր միջոցները կիրառվում են գրավոր՝ ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի որոշմամբ:*

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև Որոշման հավելվածի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությանը: Դրա համաձայն՝ *պատժախցում գտնվելու ժամանակահատվածում կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է նամակագրությունը, տեսակցությունները (բացառությամբ փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների), հեռախոսագրույցները, լրացուցիչ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության և այլ առարկաների ձեռք բերումը՝ բացառությամբ Հայաստանի*

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, հանձնուքների և ծանրոցների ստացումը, սեղանի խաղերից, թերթերից, գրքերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելը:

Հիմք ընդունելով Օրենսգրքի, Օրենքի և Որոշման վերը շարադրված իրավակարգավորումները և դրանց համադրված վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ հիմնարկի պետի որոշմամբ կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու հետ միաժամանակ նա **ցանկացած պարագայում, մեխանիկորեն՝ անկախ որևէ հանգամանքից**, զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից՝ տեսակցություններից, հեռախոսազանգերից, նամակագրությունից, ինչպես նաև գրականությունից, լրատվության միջոցներից օգտվելուց և այլն: Այսպիսի կարգավորումների պայմաններում, ստացվում է, որ տույժի այդ միջոցն ունի լրացուցիչ զրկանքներ պատճառելու բնույթ, որոնք որևէ կապ չունեն տույժի նպատակների կամ պատճառների հետ: Սա իր հերթին այդ արգելքները դարձնում է ինքնանպատակ:

Տվյալ դեպքում հաշվի առնելով Օրենքի, Օրենսգրքի և Որոշման վերաբերելի կարգավորումները՝ ստացվում է, որ անձին պատժախուց տեղափոխելիս և դրա հիմքով նրա նկատմամբ վերը նշված զրկումները կիրառելիս որևէ բացառություն չի քննարկվում, անհատական մոտեցում չի ցուցաբերվում: Այսինքն՝ գործող կարգավորումների պայմաններում անձին պատժախուց տեղափոխելը առաջացնում է սահմանադրական իրավունքների պարտադիր զրկում՝ առանց հնարավորություն տալու քննարկելու այդ զրկման նպատակահարմարության, համաչափության հարցերը: Որևէ քննարկման չի արժանանում նաև ազատությունից զրկված անձի վարքագծի ռիսկայնությունը: Այլ կերպ՝ գործող օրենսդրության բացարձակ բնույթ ունեցող արգելքի ուժով՝ յուրաքանչյուր դեպքում, երբ անձը տեղափոխվում է պատժախուց նա մեխանիկորեն զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից: Ուստի, նշվածն առաջացնում է կալանավորված անձի կամ դատապարտյալի՝ Սահմանադրությամբ ամրագրված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության իրավունքներից անհամաչափ և մեխանիկական զրկում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման, ինչպես նաև Կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ նկարագրված օրենսդրական կարգավորումների հիման վրա գործում է նույնանման խնդրահարույց պրակտիկա: Մասնավորապես, երբ կալանավորված անձը կամ դատապարտյալը տեղափոխվում է պատժախուց, ապա այդպիսի ցանկացած դեպքում նա զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից: Դրանց վերաբերյալ Պաշտպանի ուսումնասիրությունները վկայում են նաև, որ ազատությունից զրկված անձի տեղափոխումը պատժախուց և դրա արդյունքում սոցիալական մեկուսացումը կարող են անձի մոտ առաջացնել հոգեճնշող վիճակ, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել տարբեր խնդրահարույց իրավիճակների, օրինակ՝ ինքնավնասումների: Ներկայացված խնդիրը և դրա առնչությամբ Պաշտպանի ուսումնասիրություններն առավել մանրամասն ներկայացված են սույն դիմումի հետագա շարադրանքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ քննարկվող իրավունքների սահմանափակման դեպքում պարտադիր է անձի կատարած խախտման ու կիրառվող տույժի կամ իրավունքի սահմանափակման համաչափության ապահովումը: Ավելին, կիրառվող տույժի միջոցը պետք է ունենա կանխարգելիչ նպատակ, ինչպես նաև նպաստի քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովմանը:

Ուստի, դա յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի կատարված խախտման ու կիրառվող տույժի համաչափությունն ապահովելու և անհատական մոտեցման պայմաններում: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև կոնկրետ խախտման հանգամանքները և ազատությունից զրկված անձի վարքագծի ռիսկայնության աստիճանը: Այս պայմաններում ակներև է նաև, որ անընդունելի է այն, որ անձը պատժախուց տեղափոխելու դեպքում իր սահմանադրական իրավունքների իրականացման հնարավորությունից զրկվում է քրեակատարողական պետի որոշմամբ՝ առանց այդ զրկմանն առնչվող որևէ հիմնավորման:

Հետևաբար, սույն դիմումով առաջարկվում է քննարկել Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասով, Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև Որոշման 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությամբ սահմանված

կարգավորումների համապատասխանության հարցը Սահմանադրության 31-րդ, 33-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածների հետ:

6. Նշված իրավական կարգավորումները հակասահմանադրական են հետևյալ հիմնավորումներով.

Սույն դիմումում քննարկվող իրավակարգավորումների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցին անդրադառնալիս անհրաժեշտ է նախ քննարկել մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության իրավունքների բովանդակությունը, դրանց կարևորությունը, ինչպես նաև առանձին դեպքերում դրանց սահմանափակման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Հաշվի առնելով սույն դիմումով վիճարկվող դրույթների առանձնահատկությունը՝ անհրաժեշտ է նշվածը քննարկել հատկապես ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման համատեքստում: Այդ նպատակով վերլուծության են ենթարկվել ինչպես Սահմանադրության, օրենքների Կառավարության որոշումների կարգավորումները, այնպես էլ ՀՀ սահմանադրական ու վճռաբեկ դատարանների համապատասխան իրավական դիրքորոշումները:

Ուսումնասիրվել են նաև միջազգային չափանիշները և Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (ՀՀ վավերացրած կոնվենցիաներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի⁴ իրավական դիրքորոշումներ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներ, ՄԱԿ-ի կանոններ և այլն):

6.1 Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության իրավունքների սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությունը

Մասնավոր և ընտանեկան կյանքի ազատության, ինչպես նաև հաղորդակցության ազատության իրավունքները հիմնարար իրավունքներ են, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրության 31-րդ և 33-րդ հոդվածներում: Մասնավորապես, Սահմանադրության 31-

⁴ Այսուհետ՝ Եվրոպական դատարան:

րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ *յուրաքանչյուր ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք*: 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք*:

Նշված երկու հոդվածների 2-րդ մասերով սահմանվում է, որ սահմանադրական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում, այն էլ՝ հստակ հիմքերի առկայության պայմաններում: Դրանք երկու դեպքում էլ նույնն են՝ *պետական անվտանգությունը, երկրի տնտեսական բարեկեցությունը, հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը*:

Միջազգային իրավաբանության մեջ ընտանեկան և մասնավոր կյանքի իրավունքն ունի կարևորագույն նշանակություն: Մասնավորապես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ *ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության, իր տան, իր նամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի պաշտպանության իրավունք*⁵:

ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 17-րդ հոդվածի համաձայն՝ *ոչ ոք չի կարող ենթարկվել քնահաճ կամ անօրինական միջամտության իր անձնական և ընտանեկան կյանքին, քնահաճ կամ անօրինական ոտնձգության իր բնակարանի անձեռնմխելիության կամ իր թղթակցության գաղտնիքի նկատմամբ, կամ էլ անօրինական ոտնձգության՝ իր պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր*

⁵ Տե՛ս ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածը, <http://www.un.org/en/universal-declaration-human-rights/>:

մարդունի այդպիսի միջամտությունից կամ այդպիսի ոտնձգություններից օրենքի պաշտպանության իրավունք⁶:

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը սահմանված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի⁷ 8-րդ հոդվածում: Այս իրավունքի նպատակն է ապահովել անհատների պաշտպանությունը պետական մարմինների հնարավոր կամայականություններից: Կոնվենցիայի իմաստով անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքն ունի անձնական անձեռնմխելիության և իր իրավունքների ինքնուրույն իրացման հնարավորության չորս հիմնական ուղղություն՝ անձնական կյանքը, ընտանեկան կյանքը, բնակարանը և հաղորդակցությունը⁸:

Սահմանադրական կարգավորումները վկայում են, որ մասնավոր և ընտանեկան կյանքի և հաղորդակցության իրավունքները բացարձակ չեն և առանձին դեպքերում դրանց սահմանափակումը կարող է դիտվել իրավաչափ: Սակայն դա չպետք է լինի ինքնանպատակ, մեխանիկական, երբ անձինք անկախ կատարած խախտման բնույթից և ծանրության կամ վտանգավորության աստիճանից զրկվում են այդ իրավունքներից: Այլ կերպ՝ իրավունքի սահմանափակումը պետք է լինի անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված նպատակն իրացնելու համար, իսկ ընտրված միջոցները պետք է լինեն նախատեսված հիմքերի շրջանակում և համաչափ՝ հաշվի առնելով սահմանափակվող հիմնական իրավունքների նշանակությունը:

Սահմանադրությամբ ամրագրվում են նաև այն չափանիշները, որոնց առկայության պայմաններում միայն կարելի է իրավունքի սահմանափակումը համարել իրավաչափ և Սահմանադրությանը համապատասխանող: Այսպես, անձի իրավունքների սահմանափակման համաչափության առնչությամբ հարկ է մեջբերել Սահմանադրության 78-

⁶ Տե՛ս ՄՄԿ-ի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 17-րդ հոդվածը, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>:

⁷ Այսուհետ՝ Կոնվենցիա:

⁸ Տե՛ս 2012 թվականին հրապարակված «Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանությունն ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» ձեռնարկի էջ 10, https://www.echr.coe.int/LibraryDocs/Roagna2012_EN.pdf:

րդ հոդվածը, որի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:* Ըստ այս հոդվածի՝ Սահմանադրության սահմանած նպատակին հասնելու համար կարող են օգտագործվել միայն այնպիսի միջոցներ, որոնք պիտանի և անհրաժեշտ են այդ նպատակին հասնելու համար և, որ ընտրված միջոցը և հետապնդվող նպատակը պետք է միմյանց հետ գտնվեն համարժեք հարաբերակցության մեջ:

Հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը պիտանի է այն դեպքում, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն: Հիմնական իրավունքին միջամտել անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է համարժեք կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին⁹:

Այս առումով, հատկանշական են ՀՀ Սահմանադրական դատարանի հետևյալ իրավական դիրքորոշումները: ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1256 և 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշումներով ընդգծել է, որ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները չպիտի խաթարեն ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև:*

Հատկանշական է նաև, որ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«Համաչափության սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ իրավունքի համար ընտրված միջոցը պետք է՝*

- պիտանի և անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար,

⁹ Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ սահմանադրությունը. -Եր. : Տիգրան Մեծ, 2016, էջ 82:

- հետապնդվող նպատակի հետ գտնվի համարժեք հարաբերակցության մեջ:

«Պիտանիության» չափանիշի համաձայն միջոցը համարվում է պիտանի, եթե այն հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին: Մինչդեռ «անհրաժեշտության» չափանիշի դեպքում միջոցը համարվում է անհրաժեշտ, եթե օրենքով հետապնդվող նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, բացի այն միջոցից, որն ընտրվել է:

Ինչ վերաբերում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համարժեք հարաբերակցությանը, ապա այն նշանակում է, որ միջամտության սահմանների խորությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի արժեքանական նշանակությանը և կշռին: Այլ կերպ՝ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն, կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չպետք է լինի չափից ավելի խիստ՝ շրջանցելով այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները»¹⁰:

Նշվածից ելնելով կարելի է ընդգծել, որ տվյալ դեպքում քննարկվող սահմանադրական իրավունքների սահմանափակման համար պարտադիր պայման պետք է լինի կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից կատարած ենթադրյալ խախտման և կոնկրետ իրավունքի սահմանափակման միջև կապի առկայությունը: Մասնավորապես, իրավունքի սահմանափակումը չպետք է լինի ինքնանպատակ, այլ պետք է միտված լինի կոնկրետ նպատակի իրականացմանը, որը հնարավոր կլինի բացառապես խնդրո առարկա իրավունքի սահմանափակման միջոցով: Մինչդեռ, սույն դիմումում վկայակոչված խնդրո առարկա դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն համապատասխանում վերոնշյալ չափանիշներին: Յուրաքանչյուր դեպքում պատժախուց տեղափոխված ազատությունից զրկված անձն արտաքին աշխարհի հետ կապից զրկվում է մեխանիկորեն՝ բացատրություն չնախատեսող արգելքի ուժով:

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0056/11/17 և թիվ ՍԴ/0088/01/12 որոշումների համապատասխանաբար 15-րդ և 16-րդ կետերը:

6.2 Ազատությունից զրկված անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության իրավունքների իրացման առանձնահատկությունները

Ընտանեկան և մասնավոր կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև հաղորդակցության իրավունքների իրացումը, հատկապես կարևորվում է ազատությունից զրկման վայրերում: ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է, որ կալանավորված անձինք և դատապարտյալներն ունեն արտաքին աշխարհի հետ կապի՝ հեռախոսազանգերի, տեսակցությունների, նամակագրության, գրականությունից և լրատվության միջոցներից օգտվելու իրավունք: Մասնավորապես, Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է, որ *դատապարտյալն ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունք, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից:* Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ *ձերբակալված կամ կալանավորված անձն ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունք:*

Ազատությունից զրկման վայրերում, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում անձի արտաքին աշխարհի հետ կապը դրսևորվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության իրավունքների իրացմամբ: Այս համատեքստում հարկ է նշել, որ անձի վերաոցիալականացման՝ որպես պատժի հիմնական նպատակի իրականացման հիմնաքարն է անհատական պլանը, որի շրջանակներում պետք է քննարկման առարկա դառնան բժշկական սպասարկման տեսանկյունից ազատությունից զրկված անձի ռիսկերն ու կարիքները, աշխատանքը, զբաղվածությունը, կրթությունը, ինչպես նաև **ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը:** Պատժի կատարման վերաբերյալ այս հիմնական սկզբունքը հաստատվել է Եվրոպայում և ամբողջ աշխարհում¹¹: Այն արձանագրվել

¹¹ Տե՛ս 2015 թվականի հունիսի 30-ի Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի դատավորներ Պունտո դե Ալբուբուերքուեի և Տուրկովիչի հատուկ կարծիքի 10-րդ պարբերությունը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-156006>:

է նաև Եվրոպական դատարանի նախադեպային վճիռներում¹²: Ուստի, ազատությունից զրկված անձի արտաքին աշխարհի հետ կապի ապահովումն ու դրա իրականացմանն աջակցելը կարևոր է հենց նրա վերասոցիալականացման վերջնական նպատակի իրացման տեսանկյունից:

Ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման կարևորությանը և դրանում քրեակատարողական համակարգի դերին անդրադարձ է կատարվել նաև ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրում: Մասնավորապես, դրա 10-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ *քրեակատարողական համակարգը պետք է սահմանի ազատությունից զրկված անձանց հանդեպ այնպիսի վերաբերմունք, որի հիմնական նպատակը լինի նրանց ուղղումը և վերասոցիալականացումը*¹³:

Դատապարտյալի արտաքին աշխարհի հետ կապի կարևորությունն ընդգծվում է նաև ՄԱԿ-ի սահմանած կանոններում, Եվրոպայի խորհրդի հանձնարարականներում, Եվրոպական դատարանի նախադեպային վճիռներում, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե¹⁴ և այլ փաստաթղթերում:

Մասնավորապես, ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նեյտոն Մանդելայի կանոններ) 58-րդ կանոնի 1-ին կետի համաձայն՝ *ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի, անհրաժեշտ վերահսկողության ներքո, պարբերական դադարներով շփվել նրանց ընտանիքների և ընկերների հետ*՝

¹² Տե՛ս 2015 թվականի հունիսի 30-ի Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի դատավորներ Պունտո դե Ալբուբուերքուեի և Տուրկովիչի հատուկ կարծիքի 4-րդ պարբերությունը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-156006>:

¹³ Տե՛ս ՄԱԿ-ի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/ccpr.aspx>:

¹⁴ Այսուհետ՝ ԽԿԿ:

նամակագրության և հնարավորության դեպքում՝ հեռահաղորդակցության, էլեկտրական, թվային և այլ միջոցներով, ինչպես նաև ընդունելով այցելուներ¹⁵:

Եվրոպական դատարանն իր նախադեպային վճիռներում բազմիցս արձանագրել է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի կարևորությունը, հասկապես երբ խոսքը վերաբերում է ազատությունից զրկված անձանց: Օրինակ՝ Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով 2015 թվականի հունիսի 30-ի վճռում արձանագրել է, որ *կալանքն, ինչպես անձին ազատությունից զրկելու յուրաքանչյուր այլ միջոց, հանգեցնում է նրա անձնական և ընտանեկան կյանքի սահմանափակում: Այնուամենայնիվ, դատապարտյալի՝ իր ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի կարևոր մասն է կազմում վարչակազմի կողմից նրա կապը մերձավոր ազգականների հետ ապահովելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ապահովմանն աջակցելը¹⁶:*

Ազատությունից զրկված անձանց կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ապահովելու կարևորությունը և դրա շրջանակներում նրա վերասոցիալականացումն ընդգծվել է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 24.1-րդ կանոնում, որի համաձայն՝ *ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակների, հեռախոսակապի կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ: 24.4-րդ կանոնով սահմանվում է, որ այցելությունների կազմակերպումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի թույլատրվի ազատությունից զրկված անձանց դրանք պահպանել և զարգացնել հնարավորինս ընդունելի եղանակով: Ավելին, 24.5-րդ կանոնով նախատեսվում է, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պետք է աջակցի ազատությունից զրկված անձանց պահպանելու պատշաճ*

¹⁵ Տե՛ս ՄՄԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ) 58-րդ կանոնի 1-ին կետը, https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E_ebook.pdf:

¹⁶ Տե՛ս 2015 թվականի հունիսի 30-ի Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի վճիռ (գանգատ թիվ 41418/04) 106-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-156006>:

կայն արտաքին աշխարհի հետ և տրամադրելու նրանց համապատասխան, բավարար չափի աջակցություն դա իրականացնելու համար¹⁷:

Ավելին, հանձնարարականի 24-րդ կանոնի վերաբերյալ մեկնաբանությունների համաձայն՝ ազատությունից զրկումը չպետք է հանգեցնի արտաքին աշխարհի հետ կապի զրկման: Հակառակը, ազատությունից զրկված բոլոր անձինք պետք է ունենան որոշակի շփում, և քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պետք է ապահովի այնպիսի պայմաններ, որպեսզի նրանք հնարավորություն ունենան դա իրականացնել հնարավորինս լավ¹⁸:

ԽԿԿ 2-րդ ընդհանուր զեկույցի 51-րդ պարբերության համաձայն՝ ազատագրված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին ազատությունից զրկված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մերձավոր ազգականների հետ: Ղեկավար սկզբունք պետք է լինի արտաքին աշխարհի հետ շփման աջակցությունը¹⁹:

Վերը շարադրված միջազգային և ներպետական կարգավորումները վկայում են այն մասին, որ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապը դրա տարբեր դրսևորումներով՝ տեսակցություն, հեռախոսազանգ, գրականությունից և լրատվամիջոցներից օգտվել, նամակագրություն և այլն, ունի կարևոր նշանակություն: Ավելին, նշվածի իրականացման շրջանակներում կարևոր է ազատությունից զրկման վայրի վարչակազմի աջակցության տրամադրումը, քանի որ դա, ի թիվս այլ պատճառների, համարվում է այնտեղ պահվող անձի վերասոցիալականացման հիմնական ճանապարհներից մեկը:

¹⁷ Տե՛ս «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 24.1-րդ, 24.4-րդ և 24.5-րդ կանոնները, <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae>:

¹⁸ Տե՛ս «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 24.1-րդ կանոնի վերաբերյալ մեկնաբանությունները, <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae>:

¹⁹ Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցի (ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը) 51-րդ պարբերությունը, <https://rm.coe.int/1680696a3f>: Տե՛ս ԽԿԿ չափանիշների 26-րդ էջը, <http://static.echr.am/pdf/02d62f9426f1725ecb9525f656d0e6b3.pdf>:

6.3 Պատժախուց տեղափոխված կայանավորված անձանց ու դատապարտյալների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատությունից զրկման սահմանադրականությունը

Ինքնին պատժախուց տեղափոխելը հանգեցնում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության իրավունքներից զրկման: Չնայած ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի կարևորությանը, այն բացարձակ չէ և դրա սահմանափակումը, իսկ որոշ դեպքերում նաև զրկումը միջազգային և ներպետական վերաբերելի կարգավորումներով համարվում է իրավաչափ: Այնուամենայնիվ, դա պետք է դիտարկվի որպես վերջին միջոց, լինի նպատակային և կիրառվի ծայրահեղ դեպքերում: Հարկ է ընդգծել նաև, որ քննարկվող իրավունքների սահմանափակումը պետք է նաև պայմանավորված լինի անձի կատարած խախտման բնույթով, լինի համաչափ և հիմնավորված: Նշվածները քննարկվող սահմանադրական իրավունքների սահմանափակման պարտադիր պայմաններ են, որոնք միտված են բացառելու այս կամ այն կերպ անձի իրավունքների անհամաչափ կամ կամայական սահմանափակումները:

Այս առումով կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ միջազգային չափանիշների համաձայն՝ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումը պետք է լինի հիմնավոր, բխի կոնկրետ նպատակից և լինի համաչափ: Դրա հիմնավոր և համաչափ լինելու կարևորությունը կայանում է նրանում, որ կանխվեն ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապից կամայական կամ մեխանիկական սահմանափակումները: Մասնավորապես, ԽԿԿ 2-րդ ընդհանուր զեկույցի 51-րդ պարբերության համաձայն՝ *արտաքին աշխարհի հետ կապի ցանկացած սահմանափակում պետք է հիմնված լինի բացառապես անվտանգության ողջամիտ նկատառումների կամ անբավարար միջոցների վրա*²⁰:

Ավելին, քննարկվող իրավունքների կարևորությամբ պայմանավորված՝ ԽԿԿ զեկույցներում հաստատված դիրքորոշումներով՝ մասնավոր և ընտանեկան կյանքի

²⁰ Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 3-րդ ընդհանուր զեկույցի (ընդգրկում է 1992 թվականի հունվարի 1-ից դեկտեմբեր 31-ն ընկած ժամանակահատվածը) 51-րդ պարբերությունը, <https://rm.coe.int/1680696a3f>: Տե՛ս նաև ԽԿԿ չափանիշների 26-րդ էջը, <http://static.echr.am/pdf/02d62f9426f1725ecb9525f656d0e6b3.pdf>:

անձեռնմխելիության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության իրավունքների լրացուցիչ սահմանափակման կամ զրկման համար նախատեսում է դատարանի կողմից հաստատման պարտադիրություն: Օրինակ՝ Ֆրանսիայի վերաբերյալ 2010 թվականի ԽԿԿ զեկույցի 117-րդ պարբերությամբ *կոմիտեն վերահաստատել է այն դիրքորոշումը, որ Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ կալանավորված անձինք պետք է հնարավորություն ունենան հաղորդակցվելու իրենց ընտանիքների անդամների և այլ անձանց հետ այնպես, ինչպես դատապարտյալները, բացի այն դեպքերից, երբ դատարանն անհատական գործի շրջանակներում կոնկրետ ժամանակահատվածի համար նախատեսել է հատուկ արգելք*²¹:

Իսլանդիայի վերաբերյալ 2004 թվականի զեկույցի 58-րդ պարբերությամբ *ԽԿԿ-ն անհրաժեշտ է համարել, որպեսզի գրավոր արձանագրվեն կոնկրետ պատճառները, որոնք հիմնավորում են կալանավորված անձանց արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումը՝ նշելով, որ վերջիններս պետք է տեղեկացվեն դրանց մասին: Ավելին, կրկին առաջարկվել է, որպեսզի գործի դատարանի կողմից վերանայման ընթացակարգը (...)*²²:

Վրաստանի վերաբերյալ ԽԿԿ 2010 թվականի զեկույցի 108-րդ պարբերությամբ արձանագրվել է, որ *այցելությունների, հեռախոսազանգերի կամ հաղորդակցության որևէ արգելք անհրաժեշտ է հիմնավորել քննության կարիքներով, պետք է առկա լինի տվյալ գործի քննության հետ առնչություն չունեցող մարմնի կողմից հաստատում և դա պետք է կիրառվի կոնկրետ ժամանակահատվածով՝ նշելով պատճառները: Արգելքի վերաբերյալ որոշման մասին պետք է ծանուցվի տվյալ անձը և նրա փաստաբանը*²³:

ԽԿԿ վերը նշված դիրքորոշումներից կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա իրավունքների կարևորությամբ պայմանավորված՝ դրանց սահմանափակումը կամ զրկումը

²¹Տե՛ս Ֆրանսիայի վերաբերյալ 2010 թվականի ԽԿԿ զեկույցի 117-րդ պարբերությունը, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680696082>:

²² Տե՛ս Իսլանդիայի վերաբերյալ 2004 թվականի ԽԿԿ զեկույցի 58-րդ պարբերությունը, <https://rm.coe.int/1680696c17>:

²³Տե՛ս Վրաստանի վերաբերյալ 2010 թվականի ԽԿԿ զեկույցի 108-րդ պարբերությունը, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806961dc>:

պետք է պայմանավորված լինի քննության շահերով, միտված՝ իրավաչափ նպատակին հասնելուն, ինչպես նաև նախատեսվի դատարանի կողմից հաստատման պարտադիրություն:

Միջազգային փաստաթղթերը սահմանում են նաև հատուկ չափանիշներ ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի, այդ թվում՝ պատժախուց տեղափոխելու դեպքում նրանց արտաքին աշխարհի հետ շփման իրավունքի սահմանափակման վերաբերյալ: Մասնավորապես, ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ) 43-րդ կանոնի 3-րդ կետի համաձայն՝ ***տույժերը կամ սահմանափակման միջոցները չպետք է ներառեն ընտանիքի հետ կապի արգելքը: Ընտանիքի հետ կապի միջոցները կարող են սահմանափակվել միայն սահմանափակ ժամանակահատվածով և բացառապես անվտանգության ու կարգի ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված***²⁴:

Եվրոպական դատարանը, Կոնվենցիայի Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի վերաբերյալ 8-րդ հոդվածի շրջանակներում կայացրած նախադեպային վճիռներում նույնպես անդրադարձել է ազատությունից զրկված անձանց ընտանեկան կյանքի կարևորությանը: Մասնավորապես, նշվել է, որ «անձնական կյանքը» լայն հասկացություն է և չունի սահմանափակ մեկնաբանում. այն կարող է կախված լինել հանգամանքներից, վերաբերել անձի բարոյական և ֆիզիկական ամբողջությանը: Այնուհետև, Եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ այս հանգամանքները վերաբերում են նաև ազատությունից զրկմանն առնչվող իրավիճակին²⁵: Ավելին, Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ նույն հոդվածով նախատեսված պաշտպանության ներքո է գտնվում ոչ միայն ընտանիքի հետ կապը, այլ նաև անձնական զարգացումը, այլ անձանց հետ հարաբերությունների և արտաքին աշխարհի հետ կապի ստեղծումն ու զարգացումը²⁶: Ավելին, ընտանիքի անդամների շփումը

²⁴ Տե՛ս ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ) 43-րդ կանոնի 3-րդ կետը, https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E_ebook.pdf:

²⁵ Տե՛ս 1997 թվականի դեկտեմբերի 16-ի Ռանինեն ընդդեմ Ֆինլանդիայի գործով Եվրոպական դատարանի վճիռ (գանգատ թիվ 152/1996/771/972) 63-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58123>:

²⁶ Տե՛ս 2002 թվականի ապրիլի 29-ի Պրետտին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռ (գանգատ թիվ 2346/02) 61-րդ և 65-րդ կետերը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-60448>:

*միմյանց հետ համարվում է ընտանեկան կյանքի հիմնարար բաղադրիչ*²⁷: Հետևաբար, Եվրոպական դատարանը հաստատել, որ *Հոդված 8-ի կարևոր նպատակն է պաշտպանել անհատներին պետական մարմինների կողմից կամայական միջամտություններից*²⁸:

Էլ Մասրին ընդդեմ Նախկին Հարավսլավիայի Հանրապետության Մակեդոնիայի գործի փաստական տվյալներում տեղ գտած՝ դիմումատի տրամադրած տեղեկության համաձայն՝ *նա առավել, քան չորս ամիս պահվել է մենախցում՝ տեսնելով միայն անվտանգության աշխատակիցներին, քննիչներին, կտրված է եղել ընտանիքի հետ կապը, ովքեր չեն ունեցել տեղեկություն նրա գտնվելու վայրի մասին*: Այս առումով, Եվրոպական դատարանը գործը քննարկել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում և արձանագրել է անձի իրավունքի խախտում²⁹:

«Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 24.2 կանոնի համաձայն՝ *հաղորդակցությունը և այցելությունները կարող են ենթարկվել սահմանափակման կամ մոնիթորինգի, եթե դա անհրաժեշտ է շարունակվող քրեական գործով վարույթի, հասարակական կարգի պահպանության, ապահովության և անվտանգության, հանցագործությունների կանխարգելման և հանցագործություններից տուժած անձանց պաշտպանության համար նախատեսված պահանջներն ապահովելու նպատակով, այնուամենայնիվ, նման սահմանափակումները, ներառյալ դատական իշխանության կողմից սահմանված հատուկ սահմանափակումները, պետք է նախատեսեն շփման ընդունելի նվազագույն մակարդակ*: Ավելին, նույն բաժնի 60.4 կետով սահմանվում է, որ *պատիժը չպետք է ներառի ընտանիքի հետ կապի բացարձակ արգելք*³⁰:

²⁷ Տե՛ս 1988 թվականի մարտի 24-ի Օլստն ընդդեմ Շվեդիայի գործով (թիվ 1) Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 10465/83) 59-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57548>:

²⁸ Տե՛ս 1994 թվականի հոկտեմբերի 27-ի Կրուն և այլք ընդդեմ Հոլանդիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 18535/91) 31-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57904>:

²⁹ Տե՛ս 2012 թվականի դեկտեմբերի 13-ի Էլ Մասրին ընդդեմ Հոլանդիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 39630/09) 245-րդ, 246-րդ և 250-րդ կետերը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-115621>:

³⁰ Տե՛ս «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 24.2-րդ և 60.4-րդ կանոնները, <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae>:

Հայաստանի վերաբերյալ ԽԿԿ 2014 թվականի զեկույցի 22-րդ կետով արձանագրվել է, որ *Կոմիտեն վերահաստատում է իր առաջարկությունն առ այն, որ Հայաստանի իշխանությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու, որպեսզի ազատությունից զրկված բոլոր անձինք (ինչպես ցմահ ազատազրկման դատապարտվածները, այնպես էլ մյուսները) պատժախցում գտնվելու ընթացքում չզրկվեն ընտանիքի հետ կապից և, որ ընտանիքի հետ կապի յուրաքանչյուր սահմանափակում՝ որպես տույժի միջոց, կիրառվի միայն այն դեպքում, երբ խախտումը վերաբերում է այդ կապին³¹:*

Ավելին, նույն հանձնարարականի արտաքին աշխարհի հետ կապի վերաբերյալ 99-րդ կանոնի համաձայն՝ այն դեպքերում, *երբ չկա անհատական գործի շրջանակներում դատարանի կողմից կոնկրետ ժամանակահատվածում կոնկրետ արգելք նախատեսելու մասին պահանջ, ապա կալանավորված անձինք պետք է հաղորդակցվեն ընտանիքի անդամների և այլ անձանց հետ նույն եղանակով, ինչ դատապարտյալները: Կարող են ստանալ նաև լրացուցիչ այցելություններ և ունենան լրացուցիչ հաղորդակցության տեսակներին հասանելիություն: Նրանք պետք է ունենան հասանելիություն գրքերին, թերթերին և այլ լրատվության միջոցներին³²:*

ԽԿԿ 2011 թվականի թիվ 26 Ընդհանուր զեկույցի 61-րդ կետի (բ) ենթակետի համաձայն՝ *այն դատապարտյալները, ում նկատմամբ կիրառվել է մենախուց տեղափոխելն իբրև կարգապահական տույժի միջոց, չպետք է երբեք ամբողջությամբ զրկվեն իրենց ընտանիքի հետ կապից, և այդ կապի յուրաքանչյուր սահմանափակում պետք է կիրառվի միայն այն դեպքերում, երբ խախտումը վերաբերում է նման կապին: Ավելին, խնդրահարույց է նաև այն իրավիճակը, երբ ազատությունից զրկված անձինք հաճախ մի քանի շաբաթով կամ, նույնիսկ, ամիսներով զրկված են լինում արտաքին աշխարհի հետ կապից (չկան հեռախոսազանգեր կամ այցելություններ): ԽԿԿ-ն նշում է, որ անընդունելի է երկար ժամանակահատվածում*

³¹ Տե՛ս Հայաստանի վերաբերյալ 2014 թվականի ԽԿԿ զեկույցի 22-րդ պարբերությունը, https://www.ecoi.net/en/file/local/1255079/1226_1422964689_2015-10-inf-eng.pdf:

³² Տե՛ս «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 24.2-րդ և 60.4-րդ կանոնները, <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae>:

թողնել ազատությունից զրկված անձանց առանց միջոցառումների կամ արտաքին աշխարհի հետ կապի³³:

Անձին պատժախուց տեղափոխելու պարագայում նրա հիմնարար իրավունքների մեխանիկական սահմանափակման խնդրին անդրադարձ է կատարվել «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանություններում: Մասնավորապես, դրանց 1-ին կանոնի համաձայն՝ *ազատությունից զրկման դեպքում անխուսափելիորեն առաջանում են մարդու իրավունքների վերաբերյալ հարցեր: 1-ին կանոնն ընդգծում է այս ճշմարտությունը ազատությունից զրկված անձանց նկատմամբ հարգանքի անհրաժեշտության տեսանկյունից: Նման հարգանքը պահանջում նրանց նկատմամբ մարդասիրությունը: Փաստաթղթի նույն հատվածի 2-րդ կանոնով սահմանվում է, որ այս կանոնը լրացնելով 1-ին կանոնին, սահմանում է, որ անշուշտ, անձանց ազատության իրավունքից զրկումը չպետք է հանգեցնի այն ենթադրությանը, որ այդ ազատությունից զրկված անձինք մեխանիկորեն զրկվում են նաև իրենց քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներից: Անժխտելիորեն, ազատությունից զրկման դեպքում սահմանափակվում են անձանց իրավունքները, բայց նման լրացուցիչ սահմանափակումները պետք է լինեն հնարավորին սակավ: Այս կանոններն ամբողջությամբ մատնանշում են որոշ քայլեր, որոնք կարող են նվազեցնել ազատությունից զրկման բացասական հետևանքները: Յուրաքանչյուր լրացուցիչ սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով և պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ դրանք կարևոր են քրեակատարողական հիմնարկում կարգուկանոնի հաստատման, անվտանգության ապահովման համար: Վերը ներկայացված միջազգային կարգավորումներից ակնհայտ է դառնում, որ ազատությունից զրկված անձանց ընտանեկան և մասնավոր կյանքի, հաղորդակցության իրավունքների սահմանափակումը պետք է լինի հիմնավոր և համաչափ: Անընդունելի է իրավունքի մեխանիկական սահմանափակումն անկախ խախտման բնույթից և վտանգավորության աստիճանից:*

Քննարկվող խնդրի վերաբերյալ ուսումնասիրվել են նաև տարբեր երկրների քրեակատարողական օրենսդրության՝ անձին պատժախուց տեղափոխելու արդյունքում

³³ Տե՛ս ԽԿԿ 2011 թվականի թիվ 26 Հնդհանուր գեկույցի 61-րդ կետի (բ) ենթակետը, <https://rm.coe.int/16806cccc6>:

իրավունքի սահմանափակման ծավալների վերաբերյալ կարգավորումները: Վերլուծությունը ցույց է տվել, որ երկրների մի մասի՝ ոլորտին առնչվող օրենսդրական դաշտում նախատեսել է պատժախուց տեղափոխելու դեպքում անձի արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումն արգելող առանձին դրույթ: Մասնավորապես, Ֆինլանդիայի թիվ 767/2005 քրեակատարողական ակտի 15-րդ գլուխը նվիրված է քրեակատարողական հիմնարկի կարգին և կարգապահությանը: Դրա՝ ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառվող տույժի միջոցներ նախատեսող 4-րդ պարագրաֆի վերջին պարբերության համաձայն՝ **իրավունքների զրկումը չպետք է հանգեցնի ազատությունից զրկված անձի կողմից արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակման:** Նույն գլխի՝ պատժախցին վերաբերող 8-րդ պարագրաֆի 1-ին պարբերությամբ նախատեսվում է, որ **ազատությունից զրկված անձի արտաքին աշխարհի հետ կապի և զբոսանքի իրավունքը կարող է սահմանափակվել միայն այն ժամանակ, երբ դրանք վտանգում են ազատությունից զրկված անձի կամ այլոց ապահովությունը**³⁴:

Իսլանդիայի Պատժի կատարման վերաբերյալ թիվ 15/2016 ակտի 74-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով որպես պատժատեսակ նախատեսվում է 15 օրով պատժախուց տեղափոխելը: Այնուամենայնիվ, **նշվածը չի հանգեցնում արտաքին աշխարհի հետ կապի որևէ սահմանափակման**³⁵:

Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի R57-7-33-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլնի գոյություն ունեն առանձին տույժի միջոցներ, ինչպիսիք են **մինչև երկու ամիս առավելագույն ժամկետով արտաքին աշխարհից աջակցություն ստանալու արգելքը, մշակութային, սպորտային կամ զվարճանքի միջոցառումներից զրկումն առավելագույնը մեկ ամսով և տեղափոխումը պատժախուց:** Ավելին, օրենսգրքի R57-7-45-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ **պատժախուց տեղափոխումը չի առաջացնում որևէ սահմանափակում ազատությունից զրկված անձանց գրավոր հաղորդակցության համար և**

³⁴ Տե՛ս Ֆինլանդիայի թիվ 767/2005 քրեակատարողական ակտի 15-րդ գլխի 4-րդ պարագրաֆը և 8-րդ պարագրաֆի 1-ին պարբերությունը, [http://www.vankeinhoito.fi/material/attachments/rise/saannokset-osanliitteet/6IOn6IKW7/Vankeuslaki Imprisonment Act.pdf](http://www.vankeinhoito.fi/material/attachments/rise/saannokset-osanliitteet/6IOn6IKW7/Vankeuslaki%20Imprisonment%20Act.pdf):

³⁵ Տե՛ս Իսլանդիայի Պատժի կատարման վերաբերյալ թիվ 15/2016 ակտի 74-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, <http://www.fangelsi.is/media/skjol/Execution-of-Sentences-Act-No-15--23-March-2016.pdf>:

վերջիններս պահպանում են իրենց իրավունքն իրականացնել հեռախոսազանգեր տույժի կիրառման ընթացքում³⁶:

Խորվաթիայի քրեակատարողական պատիժների վերաբերյալ ակտի 146-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով որպես տույժի միջոց նախատեսվում է պատժախուց տեղափոխելը: Նույն ակտի 139-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ **պատժախուցում գտնվող ազատությունից զրկված անձը կարող է օգտագործել թույլատրելի անձնական իրեր, կարդալ ամենօրյա լրատվություն և գրքեր, փոխանակվել նամակներով և լսել ռադիո³⁷:**

Սերբիայի քրեական պատիժների կատարման մասին օրենքի 152-րդ հոդվածի համաձայն՝ **պատժախուց տեղափոխելը՝ իբրև տույժի միջոց կիրառելու ընթացքում անձը կարող է կարդալ և գրել, ինչպես նաև հնարավորություն ունի օգտվել մեկ ժամ տևողությամբ ամենօրյա զրուսանքից³⁸:**

Վերը նշված երկրների՝ սույն դիմումում բարձրացված խնդրի առնչությամբ ընդունած կարգավորումների ուսումնասիրումը վկայում է, որ դրանք բացառում են պատժախուց տեղափոխելու հիմքով արտաքին աշխարհի հետ կապի տարբեր դրսևորումների մեխանիկական, ինքնանպատակ, կամայական կամ անհամաչափ սահմանափակումը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ գոյություն ունեն երկրներ, որոնց քրեակատարողական օրենսդրությամբ դատապարտյալի կամ կալանավորված անձի արտաքին աշխարհի հետ կապի տարբեր դրսևորումների սահմանափակումները համարվում են առանձին տույժի միջոցներ: Օրինակ՝ Գերմանիայի «Ազատությունից զրկում նախատեսող քրեակատարողական պատիժների, վերականգնողական և կանխարգելիչ միջոցների վերաբերյալ» ակտի Կարգապահական գործողությունների վերաբերյալ 13-րդ գլխի 103-րդ

³⁶ Տե՛ս Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի R57-7-33-րդ հոդվածը և R57-7-45-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, https://www.legifrance.gouv.fr/affichCode.do;jsessionid=EA480BEC6B7AB59CCAECB7685A1E3B9E.tplgfr36s_3?idSectionTA=LEGISCTA000023349619&cidTexte=LEGITEXT000006071154&dateTexte=20180719:

³⁷ Տե՛ս Խորվաթիայի քրեակատարողական պատիժների վերաբերյալ ակտի 146-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը և 139-րդ հոդվածի 6-րդ մասը, <http://pak.hr/cke/propisi,%20zakoni/en/Executionof%20PrisonSentenceAct/Execution.pdf>:

³⁸Տե՛ս Սերբիայի քրեական պատիժների կատարման մասին օրենքի 152-րդ հոդվածը, <https://www.mpravde.gov.rs/en/tekst/1701/criminal-matter.php>:

բաժնում նախատեսվում են դրանց տեսակները: Նույն բաժնի 1-ին կետի 9-րդ ենթակետով, *իրեն կարգապահական տույժի միջոց, սահմանվում է պատժախուց տեղափոխելը*: Այնուամենայնիվ, հատկանշական է, որ նշվածից զատ, նույն կետի 8-րդ ենթակետով նախատեսվում է *առանձին տույժի միջոց՝ հիմնարկից դուրս գտնվող անձանց հետ հաղորդակցության սահմանափակում*³⁹:

Իսլանդիայի Պատժի կատարման վերաբերյալ թիվ 15/2016 ակտի 74-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը նախատեսում է *առանձին կարգապահական տույժ՝ հատուկ թույլտվություն պահանջող լրացուցիչ սարքավորումներից զրկում, ինչպես նաև այցելությունների, հեռախոսազանգերի և հաղորդակցության նվազեցում*: Նույն ակտի 46-րդ հոդվածով նախատեսվում է *կոնկրետ այցելությունների վերաբերյալ սահմանափակում*: Դրա հիմքերը, մասնավորապես, նպատակ են հետապնդում ապահովելու կարգուկանոնը և անվտանգությունը, կանխելու հանցագործությունը կամ առկա է պատճառ կասկածելու, որ այցելությունը որևէ կերպ չարաշահվելու է⁴⁰:

Նշված երկրների օրենսդրության ուսումնասիրումը վկայում է այն մասին, որ նախ, նման տարանջատումը հնարավորություն է նախատեսում իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի համար առանձին դեպքերում կիրառել համաչափ և նպատակային կարգապահական տույժ: Երկրորդը՝ ներկայացված կարգավորումների սկզբունքը՝ կարգապահական տույժերի տարանջատումը, նույնպես տեսականորեն բացառում է քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց իրավունքների մեխանիկական սահմանափակումը կոնկրետ տույժը կիրառելու դեպքում:

Հատկանշական է նաև այն փաստը, որ քննարկվող խնդրի վերաբերյալ տարբեր երկրների փորձի ուսումնասիրումը ցույց է տվել նաև, որ գոյություն ունեն երկրներ (օրինակ՝

³⁹ Տե՛ս Գերմանիայի «Ազատությունից զրկում նախատեսող քրեակատարողական պատիժների, վերականգնողական և կանխարգելիչ միջոցների վերաբերյալ» ակտի Կարգապահական գործողությունների վերաբերյալ 13-րդ գլխի 103-րդ բաժնի 1-ին կետի 9-րդ և 8-րդ ենթակետերը, http://www.gesetze-im-internet.de/englisch_stvollzg/index.html#gl_p0483:

⁴⁰ Տե՛ս Իսլանդիայի Պատժի կատարման վերաբերյալ թիվ 15/2016 ակտի 74-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 46-րդ հոդվածը, <http://www.fangelsi.is/media/skjol/Execution-of-Sentences-Act-No-15--23-March-2016.pdf>:

Բոսնիա և Հերցեգովինա⁴¹), որոնց համապատասխան իրավական ակտերում առանձնացված չէ կարգավորում, որ պատժախուց տեղափոխելն ինքնին առաջացնում է արտաքին աշխարհի հետ կապի զրկում, այնուամենայնիվ, բացակայում է նաև որևէ դրույթ, որը կպահանջի նման դեպքերում իրավունքների մեխանիկական սահմանափակումը: Հետևաբար, նման պայմաններում գործում է արտաքին աշխարհի հետ ազատությունից զրկված անձանց կապին վերաբերող ընդհանուր կանոնը:

Հաշվի առնելով վերը շարադրված միջազգային փորձի մոտեցումը քննարկվող խնդրի կապակցությամբ, հարցն անհրաժեշտ է դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի տեսանկյունից: Հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:* Ըստ այդմ՝ ընտանեկան կյանքի և հաղորդակցության սահմանադրական իրավունքը մեկնաբանելիս պետք է ուշադրություն դարձնել սույն դիմումով վկայակոչված, ինչպես նաև միջազգային հիմնարար փաստաթղթերի հիման վրա գործող միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված չափանիշներին:

Անդրադառնալով քննարկվող հարցի վերաբերյալ ներպետական կարգավորումներին, հարկ է նորից ընդգծել, որ քրեակատարողական օրենսդրությամբ արտաքին աշխարհի հետ ազատությունից զրկված անձի կապի իրավունքի զրկումը նախատեսվում է անձի նկատմամբ պատժախուց տեղափոխումը, որպես տույժի միջոց կիրառվելու դեպքում: Այսպես, Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ *պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են դրամական փոխանցումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը և աշխատելը:* Օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսվում են դատապարտյալին պատժախցում պահելու պայմանները: Մասնավորապես, դրա 1-ին մասով

⁴¹ Տե՛ս Բոսնիա և Հերցեգովինայի «Քրեակատարողական պատիժների, կալանքի և այլ միջոցների մասին» օրենքը, <http://www.refworld.org/docid/5b349bf24.html>:

սահմանվում է, որ պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուքներ ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:

Համանման կարգավորում նախատեսվում է նաև Ռրոշման հավելվածի 231-րդ կետով: Մասնավորապես, դրա համաձայն՝ պատժախցում գտնվելու ժամանակահատվածում կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է նամակագրությունը, տեսակցությունները (բացառությամբ փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների), հեռախոսագրույցները, լրացուցիչ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության և այլ առարկաների ձեռք բերումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, հանձնուքների և ծանրոցների ստացումը, սեղանի խաղերից, թերթերից, գրքերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելը:

Վերը շարադրված կարգավորումներից ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր դեպքում, երբ կալանավորված անձի կամ դատապարտյալի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետը կայացնում է պատժախուց տեղափոխելու մասին որոշում նա մեխանիկորեն զրկվում է արտաքին աշխարհի հետ շփման միջոցներից: Ավելին, ներկա կարգավորումների պայմաններում անձի արտաքին աշխարհի հետ շփումը սահմանափակվում է անկախ նրանից, թե վերջինիս նկատմամբ ինչ հիմքով է կիրառվել տվյալ կարգապահական տույժը: Մասնավորապես, անձի նկատմամբ պատժախուց տեղափոխելը, որպես տույժ կիրառվելու դեպքում նա **մեխանիկորեն զրկվում է** արտաքին աշխարհի հետ կապից, այդ թվում նաև մերձավոր ազգականների հետ շփումից, նամակագրությունից և այլ միջոցներից: Հետևաբար, նույնիսկ այն պայմաններում, երբ առկա է քրեակատարողական հիմնարկի պետի՝ անձին պատժախուց տեղափոխելու մասին որոշումը, նախատեսված չէ կոնկրետ պահանջ՝ ներկայացնելու տվյալ ժամանակահատվածում նրա սահմանադրական իրավունքը՝ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության իրավունքները սահմանափակելու հիմքերը կամ

ապահովելու այդ որոշման հիմնավորումը: Ուստի, ներպետական կարգավորումներն անձին պատժախուց տեղափոխելու դեպքում մեխանիկորեն արգելում են արտաքին աշխարհի հետ նրա կապը, համաչափ չեն և հակասում են միջազգային չափանիշներին:

6.4 Պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց ու դատապարտյալների սոցիալական մեկուսացումը և դրա հնարավոր հետևանքներն անձի հոգեկան առողջության վրա

Ինչպես քննարկվել է սույն դիմումում՝ գործող կարգավորումները նախատեսում են արտաքին աշխարհի հետ կապից բացարձակ զրկում պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց և դատապարտյալների համար: Այսինքն՝ խոսքը վերաբերում է անձի ամբողջական մեկուսացմանը: Ընդ որում, դա այնպիսի պայմաններով է իրականացվում, որ ստացվում է այն ունի ինքնանպատակ բնույթ ու կոչված է անձին պատճառել լրացուցիչ զրկանքներ: Այնտեղ գտնվելու ընթացքում անձի մեկուսացումը կարող է հանգեցնել հոգեճնշող վիճակի:

Նշված խնդրի առնչությամբ միջազգային փորձի վերլուծությունը նույնպես վկայում է պատժախուց տեղափոխված և դրա արդյունքում սոցիալական մեկուսացման մեջ գտնվող անձանց հոգեկան վիճակի վատթարացման վտանգի մասին:

Նախ, ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նեյտոն Մանդելայի կանոններ) 44-րդ կանոնի համաձայն՝ *մեկուսացում ասելով պետք է հասկանալ ազատությունից զրկված անձանց առանց մարդկային բավարար շփման օրվա ընթացքում 22 ժամ և ավելի մեկուսի պահելը, իսկ երկարաժամկետ մեկուսացման տակ պետք է հասկանալ ազատությունից զրկված անձին 15 օրը գերազանցող ժամանակահատվածով մեկուսացնելը*⁴²:

Դրա հետ միասին, պետք է ընդգծել, որ մարդկային բավարար շփում չի կարող համարվել քրեակատարողական ծառայողի կողմից սննդի փոխանցումը կամ հսկողության նպատակով

⁴² Տե՛ս ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նեյտոն Մանդելայի կանոններ) 44-րդ կանոնը, https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E_ebook.pdf:

խցի դիտարկումը: Դրա հետ մեկտեղ քրեակատարողական հիմնարկի սոցիալ-հոգեբանական ոլորտի աշխատակիցների ոչ պարբերական և չհամակարգված աշխատանքը, զբոսանքը, նպատակաուղղված կրթական, սպորտային և զբաղվածության ապահովման այլ ծրագրերի բացակայության պայմաններում չեն կարող ապահովել ազատությունից զրկված անձանց բավարար մարդկային շփումը:

Անդրադառնալով ազատությունից զրկված անձանց բավարար մարդկային շփման հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ *օրական ընդամենը մեկ ժամ տևողությամբ բացօթյա մարզումներն էլ ավելի են սրում անազատության մեջ պահվող անձի վիճակը, ով օրվա մնացած ողջ ժամանակահատվածն անցկացնում է խցում՝ առանց տեղաշարժման ազատության*: Դատարանը գտել է, որ *ընտանիքի անդամների հետ տարեկան երկու երկարատև և վեց կարճատև տեսակցությունները, խցից դուրս ոչ հաճախակի հանդիպումները փաստաբանի հետ, մեկժամյա զբոսանքի ընթացքում այլ դատապարտյալների հետ զրույցները և ազատությունից զրկման վայրի վարչակազմի հետ հազվադեպ շփումները չեն կարող զգալի դրական ազդեցություն ունենալ խցում օրական 23 ժամ մեկուսացվածության պայմաններում պահվողի անձի վրա*: Դատարանը եկել է այն եզրահանգման, որ *անազատության մեջ մեկուսի պահելու երկար ժամանակահատվածը կարող է վնասակար ազդեցություն ունենալ մարդու հոգեկան առողջության վրա՝ գերազանցելով պահման թույլատրելի սահմանները և հանդիսանալով անմարդկային ու մարդու պատվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք*⁴³:

Մեկուսի բանտարկության կիրառման և հետևանքների մասին 2007 թվականի դեկտեմբերի 9-ի Ստամբուլի հայտարարության համաձայն՝ *մեկուսացումը կարող է առաջ բերել հոգեբանական և, երբեմն հոգեբուժական խնդիրներ: Ախտանիշների մի ամբողջ շարք է արձանագրվել՝ սկսած անքնությունից և անորոշությունից մինչև հայրուցինացիաներ ու*

⁴³ Տե՛ս 2013 թվականի հոկտեմբերի 4-ի Ռզախանովն ընդդեմ Ադրբեյջանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 4242/07) 69-րդ, 70-րդ, 72-րդ, 73-րդ և 76-րդ կետերը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-122262>:

փսիխոզ: Անձի առողջության վրա բացասական հետևանքները կարող են ի հայտ գալ մեկուսացման մի քանի օրվանից հետո, և առողջությանը սպառնացող ռիսկն աճում է օր օրի⁴⁴:

Վկայակոչված միջազգային իրավակարգավորումները խոսում են այն մասին, որ խնդրահարույց են այն իրավիճակները, երբ կալանավորված անձը կամ դատապարտյալը տեղափոխվելով պատժախուց, անկախ դրա հիմքից զրկվում է արտաքին աշխարհի հետ կապից, քանի որ այն կարող է բացասաբար անդրադառնալ անձի հոգեկան առողջության վրա:

6.5 Պատժախուց տեղափոխված կալանավորված անձանց ու դատապարտյալների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատությունից զրկման հետևանքների վերաբերյալ Պաշտպանի ուսումնասիրությունները

Անդրադառնալով սույն դիմումում բարձրացված խնդրին, հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման, աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացված առանձնագրույցների ընթացքում, ինչպես նաև Կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով իրականացրած մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ մեկուսի պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ նկատվել է ընկճվածություն: Թեև իրականացված առանձնագրույցների ընթացքում ազատությունից զրկված անձանց մոտ հոգեկան խանգարման ակտիվ հոգեախտանիշներ չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ մտահոգիչ է նրանց մեծ մասի մոտ նկատվող տրամադրության անկումը, տարբեր աստիճանի սոցիալական դեպրիվացիան, ապագայի նկատմամբ պլանների բացակայությունը:

Միաժամանակ, կախված ազատությունից զրկված անձանց հոգեբանական առանձնահատկություններից և նախկինում հոգեկան առողջության հետ կապված խնդիրների առկայությունից, նրանց սոցիալական մեկուսացումը կարող է այնպիսի հոգեկան խանգարումների առաջացման պատճառ դառնալ, ինչպիսիք են դեպրեսիան, հալուցինատոր,

⁴⁴ Տե՛ս Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի և Միջազգային բանտային բարեփոխումների «Անվտանգության և անձի արժանապատվության հավասարակշռման. կանխարգելիչ մշտադիտարկման համար» ձեռնարկի 14-րդ էջը, https://www.penalreform.org/wp-content/uploads/2013/11/security-dignity-v8-final_for-web.pdf:

գառանցական խանգարումները և այլն: Նշված վիճակը, հատկապես հանդիպում է կալանավորված անձանց մոտ, ովքեր մուտք գործելով քրեակատարողական հիմնարկ, ամբողջովին չեն ընտելացել միջավայրին և գտնվում են ծանր հոգեկան վիճակում: Գործնականում հանդիպում են նաև այնպիսի դեպքեր, երբ մեկուսացման մեջ գտնվող ազատությունից զրկված անձինք նույնիսկ չեն ցանկանում զրուցել հոգեբանի կամ սոցիալական աշխատողների հետ:

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում տեղ է գտել մանրակրկիտ վերլուծության՝ քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող հոգեբանական աջակցության գործնական և օրենսդրական խնդիրների վերաբերյալ⁴⁵: Քրեակատարողական հիմնարկներում անձին միայն ազատությունից զրկելն արդեն իսկ կարող է հոգեբանական խնդիրների առաջացման պատճառ հանդիսանալ, և մասնագիտական ոչ արդյունավետ աջակցությունը կարող է հանգեցնել անձի համար բացասական հետևանքների: Այսօր քրեակատարողական ու ընդհանրապես ազատությունից զրկման կազմակերպման համակարգում առկա են հոգեբանական աջակցությանն առնչվող խնդիրներ:

Չկա հոգեբանական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտ ընթացակարգ, հստակ չեն մեխանիզմներն այն էլ պատժախուց տեղափոխված անձանց հետ կապված: Ռիսկայնության բարձր աստիճան ունեցող ազատությունից զրկված անձանց կամ մեղսունակությունը չբացատրող հոգեկան հիվանդության նախանշաններ կամ ինքնավնասման կամ ինքնասպանության հակում ունեցող անձանց հետ նպատակաուղղված հոգեբանական ծրագրեր գրեթե չեն իրականացվում:

Ամփոփելով վերոշարադրյալն՝ անհրաժեշտ է ընդգծել, որ նշված գործնական և հաստիքային խնդիրները բացասաբար են անդրադառնում պատժախցում գտնվող,

⁴⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի 46-րդ, 47-րդ և 48-րդ էջերը, <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf>:

հետևաբար նաև սոցիալապես մեկուսացված ու դրա արդյունքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վրա՝ խորացնելով այդ վիճակը:

6.6 ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները և ձեռք բերված տեղեկությունների հավաստիությունը

Սույն դիմումում շարադրված հիմնավորումների հավաստիությունը ցույց տալու նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքային սկզբունքներին և գործունեության մասնագիտական երաշխիքներին: Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2017 թվականի ընթացքում նոր կարգավորումների հիման վրա որդեգրվել են մասնագիտական աշխատանքի բարձր որակ ու արդյունավետություն ապահովելուն ուղղված՝ միջազգայնորեն ընդունված սկզբունքներ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները կարող են բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, Մարդու իրավունքների պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

Իրականացվել է նաև անհատական բողոքների կամ գործերի քննարկման և կանխարգելման մեխանիզմի շրջանակներում մշտադիտարկման գործառույթների տարանջատում: Ներկայում Պաշտպանի աշխատակազմում այդ գործառույթներն

իրականացվում են երկու տարբեր ստորաբաժանումների կողմից: Անհատական բողոքների կամ գործերի քննարկումը թույլ է տալիս վեր հանել ազատությունից զրկման վայրերում կոնկրետ իրավիճակներին առնչվող խնդիրները, իսկ մշտադիտարկումը հնարավորություն է տալիս ուսումնասիրության ենթարկել ողջ համակարգը (գործնական, օրենսդրական և այլն)՝ անկախ բողոքների առկայությունից: Ընդ որում, այս ստորաբաժանումների աշխատանքը փոխարացնում է իրար. մշտադիտարկման ընթացքում ի հայտ եկած անհատական դեպքերը փոխանցվում են դրանց քննարկող ստորաբաժանմանը և հակառակը՝ անհատական բողոքներով վեր հանվող համակարգային բնույթի հարցերը ներկայացվում են կանխարգելման մեխանիզմի ստորաբաժանման ուշադրությանը: Գործում է տեղեկությունների փոխանակման ճկուն համակարգ:

Սահմանադրական օրենքի հիման վրա Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչությունում, որը գործում է մշտական հիմունքներով, ներգրավված են իրավաբաններ, ինչպես նաև բժիշկ: Կանխարգելման մեխանիզմի աշխատանքներին Պաշտպանի կողմից ներգրավվել են նաև անկախ մասնագետներ՝ գիտական ոլորտի և (կամ) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր ունեն կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի կարգավիճակ (հոգեբան, սոցիոլոգ, բժիշկներ, այդ թվում՝ հոգեբույժ):

Պաշտպանի հրամանով կարգավորվել են փորձագետների գործունեության սկզբունքները և վարքագծի հստակ կանոնները, մշտադիտարկման այցերի նախապատրաստման, իրականացման, ապա ամփոփման փուլերում փորձագետների հստակ պարտականությունները, դրանք կատարելու ընթացքում և դրանցից դուրս կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակում փորձագետներին հայտնի դարձած տեղեկությունների հրապարակման արգելքը, բացառվել են շահերի բախման, ինչպես նաև փորձագետների՝ միաժամանակ այլ մշտադիտարկում իրականացնող խմբերում ընդգրկվելու հնարավորությունը:

Կանխարգելման մեխանիզմի աշխատանքի կարևորագույն սկզբունքներից է նաև ազատությունից զրկման վայրում կատարած աշխատանքի արդյունքում ձեռք բերած տեղեկության գաղտնիության պահպանումը: Սա պետք է դիտարկել նաև մեկ այլ սկզբունքի

համատեքստում, որն առնչվում է արդյունքի հասնելու հարցում համատեղ աշխատանքին ու չվնասելուն: Դրա հետ միասին, կանխարգելման մեխանիզմի ներկայացուցիչների կողմից գործադրվել է արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների՝ միջազգայնորեն ընդունված երկու հիմնական տեսակ՝ անմիջապես ներկայացվող առաջարկներ, ինչպես նաև անհրաժեշտ ուսումնասիրությունից հետո գրավոր ձևակերպմամբ իրավասու մարմնին ներկայացվող պահանջներ կամ առաջարկներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 68-րդ հոդվածի 1-ին մասով, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. Սույն դիմումն ընդունել վարույթ,

2. Որոշել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ N 1543-Ն որոշման 231-րդ կետի 2-րդ պարբերության 2-րդ նախադասության՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի, 78-րդ հոդվածի և 81-րդ հոդվածի համապատասխանությունն այնքանով, որքանով կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը, որպես տույժի միջոց կիրառելու դեպքում անձը, բացառություն չնախատեսող ընդհանուր արգելքի պատճառով, մեխանիկորեն և անհամաչափ կերպով զրկվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքի իրացումից:

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ

